ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մարտի 9-ին Կոտայքի մարզի Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջն. դպրոցի դահլիճում տեղի ունեցավ համայնքի ժողովը:

Բացման խոսք

Հարգելի համազյուղացիներ, այսօր մեր համայնքի ժողովին ներկա են մեր մարզպետարանի ներկայացուցիչները, հարգարժան Մարզպետ Շահգալդյանի գլխավորությամբ:
Նշեմ նաև, որ Պարոն Շահգալդյանը այսօր այցելեց համայնքի 100 ամյա բնակչուհի Արաքսյա Ենգոյանին և շնորհավորելով տիկին Արաքսյային ցուցաբերվեց դրամական օգնություն:
Այժմ թույլ տվեք ներկայացնել այսօրվա համայնքի ժողովի օրակարգը՝

Օրակարգ

1. Համայնքի ղեկավարի 2009 թվականի 2-րդ եռամսյակի և 2010 թվականի հունվար- փետրվար ամիսների հաշվետվություն
/Զեկուցող Հրայր Նիկողոսյան/

2. Հարցեր բնակիչների կողմից

Եզրափակիչ խոսք ՀՀ Կոտայքի մարզպետ պարոն Կ.Շահգալդյան

Համայնքի քառամյա զարգացման ծրագիր

Ելնելով համայնքի քառամյա ծրագրից կարևորում եմ համայնքանպաստ այն խնդիրները, որոնք առաջացել են բնակիչների հետ հանդիպումների, առաջարկությունների, ընդունելությունների ժամանակ:

Իսկ հատկապես կարևոր եմ համարում.

1. Փողոցների սանիտարական վիճակի ավելի բարելավման,
2. Գիշերային լուսավորման ապահովման:
3. Ճանապարհների նորոգմանը
4. Մանկապարտեզի գույքի ձեռք բերմանը / փնտրում եմ բարերաներ /
5. Համայնքի Անկախության, Երիտասարդական թաղամասերի գազաֆիկացման ծրագրերը:
6. Աղբահանության խնդիրներին.

Նշեմ, որ 2009 թվականի 2-րդ եռամսյակին համայնքանպաստ կարևոր հիմնախնդիրներից կատարվել են ասֆալտապատման և ՍՄԿ-ի շենքի վերանորոգման աշխատանքներ,ստորև կնշվի նաև գումարային ցուցանիշները:

Հատուկ ուշադրության եմ արժանացրել նաև սպորտի, մշակույթի զարգացումը համայնքում /ֆուտբոլ, վոլեյբոլ, կառատե, պարի խմբակ, երիտասարդական կազմակերպություն/:

Առանձնակի նշանակություն եմ համարում ավագանու, համայնքի ղեկավարի ընդունված որոշումների հրապարակայնությունը: Համոզված լինելով, որ ազգաբնակչության հետ բավարար հաղորդակցությունը կնպաստի մեր աշխատանքների դրական զարգացումներին:

Տեղեկատվություն համայնքի բնակչության մասին

2009թ.

1. Համայնքի բնակչությունը՝ - 3732

2. Տնտեսությունը՝ - 900

3. Ընտրողները՝ - 2121 – ***2008 թվականի տվյալներով***

4.Նոր ծնվածներ - 20 երեխա

2010թ.հունվար- փետրվար

1. Համայնքի բնակչությունը՝ - 3735

2. Տնտեսությունը՝ - 900

3. Ընտրողները՝ - 2121 – ***2008 թվականի տվյալներով***

4.Նոր ծնվածներ - 10 երեխա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009Թ.-Ի 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Մարզամշակութային Կենտրոն

*1.*Համայնքի Մարզամշակութային կենտրոնի վերանորոգման աշխատանքներ:

*ա/*ՄՄԿ-ի վերանորոգումը – 2375000 դրամ

ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ - 1695000

2010 թվականի հունվար- փետրվար ամիսների հաշվետվություն

ա/ Յուցանակների պատրաստում և տեղադրում – 1360 000
բ/ ՄՄԿ-ի պատուհաններ – 855 000

Ung. օգնություն 2009 թվականի 2-րդ եռամսյակի

1. Բժշկական օգնություն – 1143.000 դրամ

2. Ուսանողական վարձ – 160.000 դրամ

3. Ֆինանսական օգնություն - 680.000 դրամ

5. Պատերազմի մասնակիցների և 1-ին կարգի հաշմանդամներ – 910.000 դրամ

6. Մահացածների ընտանիքներ – 320.000 դրամ

7. Նոր ծնված երեխաներին – 280.000 դրամ

8. Գերազանցիկ ուսանողներին – 200.000 / 2 ուսանող /

Ung. օգնություն հունվար- փետրվար ամիսների

1. Բժշկական օգնություն – 1173500դրամ

2. Ուսանողական վարձ – 100.000 դրամ

3. Պատերազմի մասնակիցների և 1-ին կարգի հաշմանդամներ – 235000 դրամ

4. Նոր ծնված երեխաներին – 30000 դրամ

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2009Թ.

*1.*Քաղաքացիների սեփականություն հանդիսացող ընդհանուր վարելահողեր – 538 հա, որից

*ա/*Ջրովի – 226 հա - մշակվել է 120 հա
*բ/*Անջրդի – 312 հա – մշակվել է 223 հա
*գ/*Այգի – 18 հա

2. Ստացված բերք
*գ/*2009 թվական - ցորեն – 175 հա 22 ցենտներ
*դ/*Գարի – 48հա – 18,5 ցենտներ

2009 թվականին ցանվել է 174 հա ընդհամենը բանջարեղեն այդ թվում – 135 հա գազար:

3. 2009 թվականի ընթացքում կուտակվել է 600 տոննա խոտ:

Քաղաքաշինության բնագավառին տրվող հարցեր

1. 2009 թվականի տրվել է 5 շինարարության թույլտվություն:

2. 2009 թվականին 2-րդ կիսամյակում տրամադրվել է 3 ավարտական ակտ:

Առողջապահական խնդիրներ

*1.*Համայնքում գործող բուժ. Ամբուլատորիան բավարարված է ժամանակակից հնարավոր տեխնիկայով:
Բնակչությանը սպասարկում են որակյալ բուժ. անձնակազմ, որն էլ գնահատվում է բնակչության կողմից:
2008թ.-ին սոց. ներդրումների ծրագրով 14 մլն դրամի չափով կատարվել է վերանորոգման աշխատանքներ, որի 5% գումարը կատարվեց համայնքի բյուջեից:

5. 2009 թվականի 2-րդ կիսամյակին հաճախել են 73 մեծահասակ, 23 երեխա

Կրթական խնդիրներ

Կրթական խնդիրները միշտ էլ եղել են իմ ուշադրության կենտրոնում: Նշեմ որ առաջին կիսամյակում փոխանցվել է 7 ուսանողների ուսման կիսամյակային վարձ: 2 գերազանցիկ ուսանողների տրվել է 100 000 դրամական օգնություն, որն էլ համարում եմ շարունակելի գործընթաց մեկ լավագույն ուսանողի համար:

Այս տարվա առաջին դասարան հաճախող երեխաներին կնվիրվի աշակերտական պայուսակ գրենական պիտույքներով:

Դպրոցի գրադարանը հարստացրել է գեղարվեստական գրքերով: Ինչպես վերևում նշեցի կրթությունը և դպրոցը միշտ էլ պետք է լինի համանքի ուշադրության կենտրոնում:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ Կոտայքի մարզպետ՝ պարոն Կ.Շահգալդյանը, բնակիչների կողմից տրված հարցերին, մանրամասնորեն պատասխանեց պարոն Շահգալդյանը: